

ՀԱՆԴԵՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՌ ՏԱՊԱՆ.

ԱՐՀԻԱԳԱՏԻՒ ՏԵԱՌԻՆ

ԳԵՐ ԵԴՈՒԱՐԴԱՅ ՀԻՒՐՄԻԻԶ

Հ Ա Ր Ա Զ Ք *

Ովզ որ 'ի քեզ ունիս, տապան սըրբանըւէր, զաւանդ վեհ,
ի կոփածոյ վիմեդ յանկարծ փառաւորեալ յայս նըսեհ,
իղձ և տարփումն հայկասերից և մասն Ուխտիս պարծանաց,
լնկալ և յինէն զողջոյնս անձկայրեաց :

Ողջոյն համայն սըրբտիս խորոց պաշտեմ 'ի քո յայս ցուրտ վէմ,
Որ ինձ ներքնոյդ պարփակութեամբ ցայտէ հրավիր ցոլս ընդդէմ.
Երբ 'ի բոցոյն վառարանէ պատշէկը շրղից անդրադարձ,
Սըլանան ոգիքս յանմահիցն 'ի բարձ :

Ի քեզ 'ի քեզ՝ այս սլանան, ընտրեալդ չոգի սըրբասուն,
Միտք իմ և սիրտ, առ քոյդ սըրբտի սիրոյ անվերջ լիութիւն.
Եւ պերճ մըտացդ յանոյշ և զգօն 'ի հոյլ արդեանց բազմազգի,
Որը կեցցեն յաւէրժ 'ի գանձս հայրենի :

Ցերկրէ յերկին թըռչին ոգիքս, անդուստ դարձեալ 'ի յերկիր
Որ ծնաւ ըզքեզ երկնացեղից հանգոյն ծընունդ նախլնտիր.
Որ ըշհողոյդ լցցեր արմատ յաւէտապուարծ բողբոջիւք,
Պայծառակերպեալ հոգւոյդ արգասիւք :

* Յ'Յ փետրուարի տարւոյս փոխագրեցաւ մարմին նորս 'ի Հռովմայ 'ի Վենետիկ և ամիս, փեցաւ յառանձին մարմարեայ տապանի 'ի գերեզմանատան Վանաց :

Այսպէս երեսքդ ինչ պատկերին տիպար անմեղ զըւարթնոյ.

Լուսալըսակ, ալէզարդիկ զըլուխտ 'ի հիւսա արծաթոյ.

Եւ յարաժմիտ այսք կարմրերփեան, և աչք երկնից հայելիք.

Շըրթունք հեշտախօսք, օրհնիւք գեղեցիկք:

Անդուստ 'ի միտո իմ ճաճանչ առաքինոյդ սուրբ կենցաղ,

իբր առաւօտ դարնանագեղ լըցեալ յախորժ սիք խաղաղ.

իբրև պարտէզ լիարեղուն ծաղկօք պըտղովք պըճնաղարդ,

Միշտ ուրախարար 'ի տես՝ յերգ զըւարթ:

Կամ զերդ գոհար բազմանկինի ճառագայթեալ երկն յերփին

Աղջ աղջ 'ի Քեզ փայլեն շընորհք վայելշառուք Արարչին.

Վառ՝ 'ի ճակատդ իբր 'ի կեղրոնն էին փառաց սուրբ նախանձ,

Յոր խառնի շողող և սէր գերազանց:

Եւ 'ի նոցունց՝ իբր յաղբերէ ակնավընիտ ջինջ վըտակք,

Ոսկեճամուկ սըփոին նըցցուք ընդ ճոխ կենաց քոց պըսակ.

Իսկ Հեղութիւն ծաւալ առնու մեղմիկ յընթացս համասփիւռ,

Եւ Անմեղութիւն կայթէ լուսաթոյր :

Եւ ահա թուխս մերթ սերովքէ, մերթ հոգելից հայրապետ,

Աղօթանուէր սուրբ ճըգնասուն անխոնջ յընթացս երկնաւէտ.

Եւ լուսատու յար 'ի ծուլմանց մատանցդ հայկեանըս դրոհի,

Ղըրարիս 'ի փունջ կապեալ միուլի :

Ո՛հ, այսքանեաց ձըրից հանդէսք և յիշատակք ցանկալիք

Անձկակարօտ տան հառաշել առ քո տապան ինձ այժմիկ :

Ա.Յ. մըխիթար մեծ կարեվէր սըրտի՝ արդարըն տրիտուր,

Յոր ցընդին համայն վարանմունք տըխուր :

Բարէ, լըսեմ բերկրապատար, ազդ մի ողջոյն հայրենի

Գովեն ըզգիեղ մեծ դըրուատենք մեծաց արդեանցդ արժանի.

Գովեն դ' անոյշ կենաց բանիցդ և ըզգըրիչ քո գողարիկ,

Զինչ քընար անդուլ հընչեալ երգեցիկ :

Եւ առժամեայց՝ ահա դիտեմ՝ խառնեալ յորդոր գարք ապայք,

Դիտապետիդ սուրբ հանդիսից լինին պատմողք և վըկայք,

Աւանդելով միմեանց զանունդ և ըզկենցաղ քո զուարթուն

իբր յամբայր հոգի՝ երկնայնոց հանգոյն :

Այս այս և մերս ոդիք ընդ անմահից լուսերամ,

Մեծահաւատ աչքը տեսեալ ըզքո մեծ փառս անթառամ,

Ի բիւրարիւր վառեալ վարդից պըսակաւոր ըզհոդիդ,

Լիւզիլ յըզմայլմանց ալիս իմատ առ իմատ,

Դոշեն յաւերժ և գոշեսցեն՝ զարմանապահնք վառ՝ ի աէր,
Բղբեղ մեծանձն առաքինի յասպարիզիդ երկնանուէր,
Եւ յոքնարդիւն անբաւ երկովք ամենաշնորհ հայկաբան,
Հստոյդ գեղեցկին միրող և երդաբան: ...

Իցիւ բերկրեալք, Ամոքքդ ընտիր, յօթեանացդ երջանիկ,
Առ հայրասէր սըրտից ուղերձ և հառաշանս անկեղծիկ,
Լիահոսան և ևս հեղիք զանմահարացն ՚ի մեզ լոյս,
Զի փըթթեսցի միշտ այգիդ քաջարոյս:

Հ. Դ. Ն.

Ա Ս Տ Ո Ւ

Լուռ լերուք, ոչ ցընծութեան այժմիկ տեսիլ այլ սըգոյ,
Բուռն հարեալ ըլլագաղից բնութեան՝ դիմեմք ՚ի գերեզման:

Աւաղիկ շընչէ հիւսիս, քըստմի դողայ երկիրս համբուն,
Եւ ՚ի լերանց կուտակք ամպոց լըսինք մըթինք երիթանան.

Մոընչեն փապարք և ծերաք ՚ի վիմահատ ժայռո ափափայս
Եւ խուլ սօսափիւն վարդի ՚նդ անտառու և մացառուտու:

Գազանք ամեհիք յաղմըկալից յոյզ տարերաց

Սարտուցեալ՝ թողուն ըզգաշտ զընան զըգուել զիւրեանց կորիւնս.

Անյագ միայն զոյլ և բորեան ՚ի գիշախանձ յառ և յապուռ.

Յածին շուրջ թափառական ընդ տուռնապատ ծըմակս հովտաց :

Տըխրերանդ տերնք ոսինք յետին նըշանք աշնանայնոյն՝

Վայրայած գետնաթաւալ ըզհիւլ լընուն շինականին,

Կամ ըստ հողմոյն ման՝ ՚ի ման շըրջանակեալ յորձանապտոյս՝

Մերթ ցըրուին մերթ գիզանին զերդ թըխագոյն ամպոց պատառք:

Ո՞հ, թէ ՚ի թիս թոռուցեալ թեթևս՝ գառնայի յետս ուստի ելի
Ի բուրաստան գարնանազուարճ, յայգեաց ՚ի ստուերս ողկուզալից,

Ուր սըփուեալ գեղածիծաղ հօրուտք մօրուտք և մանիշակ,

Անդ բազմեալ զըւարթագին երգեցի զբեզ Մանկութիւն:

Զե քամեալ զբաժակն ողջոյն՝ ել, ՚ի ձեռացըս սահեցաւ,

Քան զերազ ինչ խարուսիկ յուսազարդեալ խաղաղ ՚ի քուն:

Ի զուր հառաշեցի, կեանք իմ լըցան հառաշանգք.

Երանք մանկութեան որ ոչ ծանեաւ յոգւց հանել,

Արեգակն ՚ի շառաւիզըս քօղարկեալ ազտալոյս՝

Անկանի մօրն անդ՝ ՚ի ծոց՝ ոչ ամփեալ զուսին ողորմ՝,